ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ, ԵՐԱԶԱՄՈՒՅՆ ՎԱՅՐԻ ԵՎ ԴՎԻՆ ՔԱՂԱՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի հելլենիստական շրջանի և մ. թ. առաջին դարերի պատմության ուշագրավ խնդիրներից են Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրման ժամանակ Բագարանից բերված Արտեմիսի (Անահիտի) և Ապոլոնի (Հելիոս-Միհրի) արձանների տեղադրման, ինչպես նաև մայրաքաղաքը Արտաշատից Դվին փոխադրելու, Դվին քաղաքի հիմնադրման հարցերը, որոնց մասին պատմագիտական գրականության մեջ տարբեր կարծիքներ կան։

Դվինի և Արտաշատի պեղումները թույլ են տալիս նորովի մեկնաբանել այդ հարցերը, ուստի մենք ուզում ենք մեր նկատառումները հայտնել։

Առաջին հարցի վերաբերյալ ամենահին և միակ տեղեկությունը մեզ հաղորդում է Մովսես Խորենացին. «Երթեալ Արտաշիսի ի տեղին, ուր խառնին Երասխ և Մեծամօր, և հաճեալ ընդ բլուրն՝ շինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ։ Զեռնտու լինի նմա և Երասխ փայտիւք մայրեաց. վասն որոյ անաշխատ և երագ շինեալ՝ կանգնէ ի նմա մեհեան, և փոխէ ի նա ի Բագարանէ զպատկերն Արտեմիդեայ և զամենայն կուռս հայրենիս. բայց զԱպողոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնէ մօտ ի ճանապարհն (այս և հետագա ընդգծումները մերն են-Ժ. Խ.)։ Եւ յարուցանէ ի քաղաքէն Երուանդայ զգերութիւն Հրէից, որ փոխեալ էին անդր յԱրմաւիրայ, և նստուցանէ զնոսա յԱրտաշատ։ Նա և զամենայն վայելչութիւն քաղաքին Երուանդայ, զոր տարեալ էր յԱրմաւիրայ և զոր անդէն արարեալ նորա՝ փոխէ յԱրտաշատ. և առաւել ևս յինքենէ յօրինէ իբրև զքաղաք արքայանիստ»[1]։

*Քրիստոնեության տարածման ժամանակ հեթանոսական տաճարների ու սրբատեղիների ավերման կապակցությամբ Ագաթանգեղոսն ասում է. «...Թա-*գաւորն խաղայր գնայր ամենայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ՝ երթալ յԱրտաշատ քաղաք, աւերել անդ զբագինսն Անահտական դիցն, և որ յԵրազամոյն տեղիսն անուանեալ կայր: Նախ դիպեալ ի ճանապարհի Երազացոյց Երազահան պաշտաման Տրի դից, դպրի գիտութեան քրմաց, անուանեալ Դիւան գրչի Որմզդի, ուսման ճարտարութեան մեհեան. նախ ի նա ձեռն արկեալ՝ քակեալ այրեալ աւերեալ քանդեցին»[2]:

Ագաթանգեղոսի հունարեն տեքստում ավելացված է նաև, որ Ապոլոնի զոհարանը (մեհյանը) կոչվում է Տրիտիս[3]*։ Ստացվում է, որ Տիրը համադրվել է Ապոլոնի հետ, և Արտաշատի մոտ գտնվող Ապոլոնի սրբատեղին դարձել է Տիրի սրբատեղին։ Սա Տիրի մասին առաջին և միակ վկայությունն է։ Այս հարցին մանրամասն անդրադարձել ենք «Իրանա-հայկական դիցաբանական աղերսների հարցի շուրջ»*[4] *աշխատության մեջ, ուստի հարկ չենք համարում այստեղ մանրամասնությունների մեջ մտնել, նշենք միայն, որ Ապոլոնի (Արեգի, Միհրի) արձանը Արմավիրում և Բագարանում կանգնեցված է եղել մեհյանում, իսկ Արտաշատում՝ քաղաքից դուրս, ճանապարհին մոտ, իբրև առևտրի աստ-*

---

1 *«Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց» (այսուհետև՝ Մովսես Խորենացի), Երևան, 1981, էջ 210։*

2 *«Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց» (այսուհետև՝ Ագաթանգեղոս), Երևան, 1983, էջ 436։*

3 Agathangelus und die Akten Gregors von Armenien, („Neu herausgegeben von Paul de Lagarde", Göttingen, 1887, S. 65, 22).

4 *Ժ. Դ. Խաչատրյան, Իրանա-հայկական դիցաբանական աղերսների հարցի շուրջ (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, № 2, էջ 58—59)։*

վաղ, քանի որ նա հունական աշխարհում վաղուց էր նույնացվել Հերմեսի հետ։ Տիրը, որ հայկական պանթեոն է մտել, կամ նրա պաշտամունքն ուժեղացել է Արշակունիների օրոք, քանի որ նրա ավելի վաղ գոյության մասին ոչ մի տեղեկություն չունենք, Ապոլոնի հետ համադրվել է իբրև արվեստի, ճարտասանության աստված, իսկ Հերմեսի հետ՝ որպես գուշակություն անող[5]։

Ագաթանգեղոսի վերոհիշյալ վկայությունից ելնելով, ենթադրվում է, որ Տիրի տաճարը (նաև Երազամույն վայրը) պետք է լինի անպայման Արաքսի ձախ ափին, Վաղարշապատ-Արտաշատ ճանապարհին։ Ս. Երեմյանը Երազամույն վայրում գտնվող Տիր-Ապոլոնի տաճարը իր աշխատություններից մեկում տեղադրում է Վաղարշապատի արևելյան դարպասից՝ Արեգ դռնից դուրս եկող, Արտաշատ տանող ճանապարհին, այժմյան Զվարթնոցի տեղում[6], իսկ հետագայում, հայ ժողովրդի պատմության I հատորում՝ Դվինում։ «Անուղղակի տվյալները ցույց են տալիս, որ Տրդատ I -ը, հետևելով իր տոհմի նախորդների ավանդույթներին, իր գահակալությունը սրբագործելու համար մայրաքաղաք Արտաշատի հյուսիսային արվարձաններում հիմնում է սրբավայր, որը պիտի կոչվեր «Դուին-Ասսակ»։ Ագաթանգեղոսի տեղեկություններից երևում է, որ Ասսակ արվարձանում հիմնված տաճարը նվիրված էր Տիր աստծուն և «իբրև ուսման ճարտարութեան մեհեան» և «երազահան պաշտաման Տրի դից» կոչվում էր «Երազամոյն»։ Սրա ուխտի օրը Տրդատ I -ը սահմանում է հայկական ամսի 17-րդ օրը, որն այնուհետև կոչվում է «Ասսակ», որ այս տաճարի շենքը պիտի լինի Դվինի պեղումների ժամանակ հայտնաբերված I դարում կառուցված եռանավ բազիլիկան, որը քրիստոնեությունը ընդունելուց հետո դարձել է քրիստոնեական տաճար[7]։ Այս կարծիքի համար «անուղղակի փաստ» է ծառայել այն, որ պարթևական թագավորության անդրանիկ արքա, Արշակունյաց դինաստիայի հիմնադիր Արշակ-Տրդատը թաղվել է Ասսակ քաղաքում, որը գտնվում էր Կասպից ծովի հարավ արևելքում՝ Հիրկանիայում (Վրկանաց աշխարհ), որտեղ և պահվում էր հավերժական կրակը[8]։ Հիրկանիայում հանդիպում են մի շարք բլուրներ՝ Գիրա-Դուվին, Լալա-Դուվին, Սուլթան-Դուվին, Կաֆիր-Դուվին և այլն[9], որոնք հյուսիսային քոչվորներից պաշտպանվելու համար հնում ամրացված արհեստական բլուրների շարք էին։ Վերոհիշյալ ենթադրությունն ընդունելով, Դվինի պեղումների մասնակից Գ. Քոչարյանը ավելացնում է, որ, հավանաբար, քրիստոնեության բուռն զարգացման շրջանում Դվինն ընդմիշտ մոռացության է մատնել իր հեթանոսական պիտակը՝ «Ասսակ» անունը, թե Արտաշատը և Դաշնին կառուցվելուց հետո, Դվինն իր աշխարհագրական գերիշխող դիրքի շնորհիվ, մ. թ. առաջին դարում ձեռք է բերում կարևոր պաշտպանական նշանակություն հիշյալ երկու նստավայրերի համար, որ Հայաստանի նոր տերերը՝ Արշակունիները, իրենց բուն հայրենիքի՝ Պարթևստանի օրինակով, քննարկվող հնամենի բլուր-տեղավայրը անվանում են կուլտուր-տեխնիկական նոր տերմինով՝ Դվին, իբրև Սրբազան բլուր և դարձնում պաշտպանական ու պաշտամունքային նշանակալից տեղավայր[10]։ Այսպիսով, ըստ Ս. Երեմյանի, Տրդատ I -ը «Դուին Ասսակ» սրբավայրում հիմնել է տաճար՝ նվիրված Տիրին. և քանի որ, ըստ Ագաթանգեղոսի, Ապոլոնի և Տիրի

---

[5] Н. Эмин, Очерки религий и верований языческих армян, М., 1864, с. 26; Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1910, էջ 288—289։

[6] С. Т. Еремян, Развитие города и городской жизни в древней Армении («Вестник древней истории» (ВДИ), 1953, № 3, с. 22).

[7] «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Երևան, 1971, էջ 761, 826, հ. 2, Երևան, 1984, էջ 83, ծան. 12։

[8] Է. Լ. Դանիելյան, Խիդոր Քարակացու «Պարթևական կայանները» («Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1971, № 4, էջ 174)։

[9] M. V. Minorsky, Le nom de Dvin („Revue des etudes arméniennes", t. x. f. 1, Paris, 1930, p. 117—120).

[10] Գ. Գ. Քոչարյան, Դվինը անտիկ դարաշրջանում (ՊԲՀ, 1979, № 2, էջ 272—277)։

տաճարները նույնն են, ուրեմն Արտաշեսը Ապոլոնի արձանը կանգնեցրել է Դվինում։

1) Ըստ Մովսես Խորենացու, Ապոլոնի արձանը կանգնեցվել է Արտաշատ քաղաքից դուրս (բայց ոչ հեռու), ճանապարհի մոտ։ Զվարթնոցը Վաղարշապատի մոտ էր, ոչ թե Արտաշատի, ուստի այն Զվարթնոցում կանգնեցվել չէր կարող։

2) Դվինը գտնվում էր Վաղարշապատ-Արտաշատ ճանապարհից դուրս։

3) Ապոլոնը ճանապարհին մոտ կանգնեցվեց, իբրև ճանապարհների և առևտրի հովանավոր աստված, այսինքն՝ Հերմես[11], մինչդեռ Ս. Երեմյանը Դվինն իրավացիորեն տեղադրում է առևտրական ճանապարհներից դուրս[12]։

4) Արտաշատի կառուցման հետ միաժամանակ Ապոլոնի սրբատեղին արդեն հիմնադրվել էր և այն չէր կարող վերածվել «Ասսակ» սրբավայրի, այլ Ապոլոն-Հերմեսի հատկանիշներն ունեցող հայկական Տիրը կարող էր նույնացվել նրանց հետ և Ապոլոն-Հերմեսի սրբատեղիում կառուցվել Տրդատի գահակալությունը սրբագործող Տիրի տաճարը։

5) Դվինի պեղումների ժամանակ մինչև օրս չի հայտնաբերվել մ. թ. I-III դդ. ոչ մի նյութ։ Հետևաբար, Դվինում չէր կարող լինել ո՛չ տաճար, ո՛չ ամրոց, ուստի պաշտպանական կարևոր նշանակություն չէր կարող ունենալ Արտաշատի և Գառնիի համար։ Ոչ Արտաշատը, ոչ էլ սնտիկ դարաշրջանի մյուս քաղաքները չեն ունեցել իրենց շրջապատող ամրոցների պաշտպանական սիստեմ։

6) Դվինի պեղումների ղեկավար Կ. Ղաֆադարյանը բազիլիկան թվագրում է III դարով, նշելով, որ վերջինս կառուցված է կրաշաղախով, որն ավելի ուշ շրջանի շինարարական տեխնիկային է բնորոշ[13], և ոչ՝ մինչև III դարի տեխնիկային։ Սռանավ բազիլիկայի քարերը հեթանոսական տաճարի քարեր համարելու ոչ մի հիմք չկա, իսկ վերջին տարիների պեղումները ցույց տվեցին, որ այն կառուցվել է IV դ. վերջերից ոչ շուտ, այսինքն՝ եռանավ բազիլիկան ոչ մի կապ չունի Ագաթանգեղոսի վկայակոչած Տիրի տաճարի հետ։

7) Ագաթանգեղոսը հիշատակում է Տիրի տաճարը «Երազամոյն» կոչված վայրում, այսինքն, եթե դա Դվինում լիներ, պետք է նշեր Դվին (բլուր) կամ Ասսակ։

8) Ագաթանգեղոսը նշում է, որ երբ պարսիկների դեմ տարած հաղթանակից հետո խոսրով Մեծ-Տրդատ II-ը մեծ ավարով վերադարձավ Վաղարշապատ[14], «Ապա հրաման տայր ընդ կողմանս դեսպանս արձակել, հրովարտակս առնել, յեօթն բագինս մեհենիցն ուխտաւոր լինել պատկերաց կուռ դիցն պաշտաման։ Սպիտակ ցլուք և սպիտակ նոխազօք, սպիտակ ձիովք և սպիտակ ջորւովք, ոսկեղէն և արծաթեղէն զարդուք, ի վերջաւորս փողփողեալս, նշանակապ պալարակապ մետաքսիւքն և ոսկովք պսակօք և արծաթի զոհարանօք, յանօթս ցանկալիս ակամբք պատուականօք, ոսկով և արծաթով, ի հանդերձս պայծառս և ի զարդս գեղեցիկս, զիւր ազգին Արշակունեաց զնայրենեացն պաշտամանց տեղիսն մեռատէր։ Նա և հինգերորդ ևս հանէր, յամենայն մեծամեծ աւարացն ածելոց, և մեծամեծ պարգևս քրմացն շնորհէր։ Իսկ զօրացն որ զիւրեանն էին՝ ետ պարգևս և արձակեաց յիւրմէ»[15]։ Բերված փաստերը ցույց են տալիս, որ Ապոլոնը Դվինում չի կանգնեցվել, այնտեղ «Ասսակ» անունով սրբավայր և Տիրի տաճար չի կառուցվել, ուրեմն «Երազամոյն տեղերը» Դվինում չի եղել։

---

11 Ժ. Դ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 58։

12 Ս. Տ. Երեմյան, Հայկական պետությունը Տիգրան Մեծի ժամանակաշրջանում, Երևան, 1979, քարտեզը։

13 Կ. Դ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 88, 91, 92, 94, նույնի՝ Դվին քաղաքի հիմնադրման ժամանակի և միջնաբերդի հեթանոսական մեհյանի մասին (ՊԲՀ, 1966, № 2, էջ 45—48)։

14 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 2, էջ 25։

15 Ագաթանգեղոս, էջ 26, 28։

Ագաթանգեղոսի վկայությունը, որը փաստորեն Տրդատ I-ի թագադրությունից մոտավորապես 150 տարի հետո կատարված դեպքերին է վերաբերում, խոսում է այն մասին, որ Հայաստանում ընդհանրապես «Ասսակ» անունով սրբավայր գոյություն չի ունեցել, այլ եղել են «Արշակունի տոհմի հայրենական պաշտամունքի վայրեր»։ Տրդատի համար, քանի որ նա Արշակունիների մի ճյուղն էր, որպես տոհմական ընդհանուր սրբավայր շարունակում է մնալ Հիրկանիայի Ասսակ քաղաքի մեհյանը։ Նա միայն ամսվա օրերից մեկը՝ 17-ը, որը հավանաբար նրա թագադրության օրն է, կոչում է «Ասսակ» -ի անունով, իսկ իր թագադրությունը սրբագործելու համար, Ապոլոն-Հերմեսի սրբատեղիում, մ. թ. I դ. կառուցում է նրանց հետ համադրված Տիրի տաճարը և իր նախորդ դինաստիաների օրինակով սահմանում է «հայրենական պաշտամունքի վայրեր»։

Որո՞նք էին այդ սրբատեղիները։

Հին աշխարհում ընդունված էր, որ նոր դինաստիաների հիմնադիրները իրենց իշխանության օրինականությունը հիմնավորելու համար ինչ-որ ձևով, իրենց կապեին նախորդ կամ նշանավոր դինաստիաների հետ։ Այդ տենդենցը կար նաև Հայաստանում։ Արտաշես I-ը իր մի արձանագրության մեջ, օրինակ, իրեն անվանում է Երվանդական (Երվանդյան)[16]։ Այնուհետև Արտաշես I -ը իր նոր մայրաքաղաքում՝ Արտաշատում, մեհյան կառուցելով, այստեղ է փոխադրում Արմավիրից Բագարան տարված Անահիտ դիցուհու արձանը և նախնիների կուռքերը, այսինքն՝ Երվանդունիների պետական պաշտամունքը, դինաստիայի հովանավոր աստվածներին (Լուսին-Անահիտ-Արտեմիս, Արեգ-Ապոլոն-Միհր) և նրանց նախնիներին, որոնց պաշտամունքը հաստատվել էր արդեն Երվանդունի վերջին թագավորների ժամանակ և որոնց Արտաշեսը նույնությամբ ընդունում է որպես իր պետության պաշտոնական կրոն, իր դինաստիայի հովանավոր աստվածներ և իր նախնիներ։ Ամենայն հավանականությամբ, Արտաշես I -ի օրոք կանոնացվում է նախնիների անվանական ցանկը, որի մեջ մտել են նախ Աքեմենյանները, Երվանդունիները, այնուհետև Արտաշեսյանները։ Տիգրան II-ի ժամանակ հիմք դրվեց նաև տիրակալի պաշտամունքին։

Արշակունիները հայկական դահին հաստատվելուց հետո, այս բոլորը նույնությամբ ընդունելով, նախնիների շարքում պետք է ավելացնեին պարթև Արշակունիներին և, աստիճանաբար, նաև՝ հայ Արշակունիներին[17]։ Արտաշատում Արտաշեսյանների տոհմական սրբատեղին դարձավ նաև Արշակունիներինը։ Հայաստանում Արշակունի տոհմի հայրենական պաշտամունքային վայրերի թվին էր պատկանում նաև Դարանաղյաց գավառի Անի ամրոցը, որտեղ թաղված էին Արշակունիները, այստեղ է եղել նաև Զևս-Արամազդի մեհյանը և Անգեղ տուն գավառի Անգեղ բերդը, որտեղ թաղված էին Արտաշեսյանները[18]։ Տոհմական պաշտամունքային վայրերից կարող էր լինել նաև Արտաշատի մոտ գտնվող Ապոլոն-Հերմեսի սրբատեղիում հիմնադրված, նրանց հետ նույնացված Տիրի տաճարը։ Հայտնի է, որ Տրդատը վերակառուցեց նաև Գառնի ամրոցը և այնտեղ կառուցեց իր հովանավոր աստված Միհրին[19] (հնարավոր է նաև իր նախնիների ու տիրակալի[20] պաշտամունքին) նվիրված տաճար, որը նույնպես կարող էր լինել տոհմական սրբատեղիներից մեկը։ Ամենայն հավանականությամբ, եղել են նաև տոհմական այլ սրբավայրեր ևս, որոնք առայժմ մեզ հայտնի չեն։

Իսկ որտե՞ղ կարող էր կանգնեցված լինել Ապոլոն-Հերմեսի արձանը, որտե՞ղ կարող էր լինել «Երազամոյն կոչված տեղերը»։ Մագնեսիայի ճակատա-

---

16 Գ. Խ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1963, էջ 44, 70—72։

17 Նույն տեղում։

18 Նույն տեղում, էջ 63—65։

19 Դիոն Կասիոս, գիրք 63, էջ 204 (թարգմ. Ս. Մ. Կրկյաշարյանի), Երևան, 1976։

20 Ժ. Դ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 70—71։

մարտից (մ. թ. ա. 189 թ.) հետո նոր հայկական պետության հիմնադիր Արտաշես I -ը մ. թ. ա. 180-ական թվականներին ձեռնամուխ եղավ նորաստեղծ պետության մայրաքաղաքի կառուցմանը։ Արտաշատը գտնվում էր Արաքս և Մեծամոր գետերի միախառնման տեղում առաջացած թերակղզու 12 մեծ ու փոքր բլուրների վրա։ Տեղի ընտրությունը կատարված էր շատ հաշող թե՛ ստրատեգիական և թե՛ տնտեսական առումով և միանգամայն համապատասխանում էր բոլոր այն պահանջներին, որոնք, ըստ անտիկ հեղինակների, անհրաժեշտ էին քաղաքի կառուցման համար[21]։ Քաղաքի կառուցումից հետո այն պետք է միացվեր Հայաստանի մյուս քաղաքների և միջազգային առևտրական տարանցիկ ճանապարհների հետ։ Ըստ երևույթին, առաջին հերթին կառուցվել է Տափերական կամուրջը Արաքսի վրա, որով Արտաշատը կապվելու էր Միջերկրականի ափերի, Միջագետքի ու Փոքր Ասիայի առևտրական կենտրոնների հետ։ Այս ճանապարհը Տիգրան Մեծի ժամանակ բարեկարգվեց և Տիգրանակերտ-Արտաշատ հատվածը կոչվեց «Արքունի պողոտայ»։ Տափերական կամրջով անցնող ճանապարհը տանում էր Նախճավանով Պարթևստան, Միջին Ասիա, Հընդկաստան և Չինաստան, Վաղարշապատով, Սև ծովի ափերով, Սեբաստապոլիսով դեպի հյուսիս, ինչպես նաև՝ Երևանով, Աղստևի հովտով՝ Վիրք և Աղվանք։ Այսպիսով, Արտաշատը դառնում էր միջազգային առևտրական ճանապարհների խաչմերուկում գտնվող կարևոր հանգույց։

Արաքսի երկու ափերի, Արտաշատ քաղաքի տեղանքի զննումը, ինչպես նաև պեղումներով բացված քաղաքային պարիսպները և նրանց վրա գտնվող հինգ արտաքին դռները թույլ են տալիս ճշգրտելու Տափերական կամրջի տեղը։ Այդ դարպասները հյուսիս և հյուսիս-արևմտյան կողմում են և ցույց են տալիս ճանապարհի ուղղությունը, որը I—IV, VII և VIII բլուրների փեշերով անցնելով՝ գնացել է հյուսիս և արևելք, ու դեպի հարավ՝ Արաքս գետը, որտեղ պետք է լիներ Տափերական կամուրջը։

Արտաշատի դիմաց, Արաքսի աջ ափին գտնվում է մի բլուր, որի կողքով անցնում է Տափերական կամրջով դեպի հարավ-արևելք գնացող ճանապարհը։ Այս բլրի մոտով է հոսում Արաքսի վտակ Գինեգետը, որտեղ բաղմանում էին որդան կարմիր ներկի որդերը։ Այստեղ պիտի գտնվեր արաբական աղբյուրների Khirmiz քաղաքը (Արտաշատ քաղաքի մնացորդը), որը համարվում էր որդան կարմիր ներկի արտադրության ու ներկարարության կենտրոն։ Khirmiz հայերեն «Գինեգոյն» բառի[22] բառացի թարգմանությունն է։

Պետք է ենթադրել, որ Ապոլոնի արձանը կանգնեցվել է վերոհիշյալ բլրի վրա, որը երևում է նաև Արտաշատից։ Արաքսի ձախ ափին, Արտաշատ-Վաղարշապատ տանող ճանապարհին, Արտաշատի մոտակայքում, ընդհանրապես հարմար տեղ չկա նման սրբատեղիի համար, և «Արքունի ճանապարհն» ավելի կարևոր էր, քան Արտաշատ-Վարդապեսավանը (Վաղարշապատ), ուստի ճանապարհների և առևտրի հովանավոր աստծուն պետք է կանգնեցնեին գլխավոր մայրուղու վրա։ Ըստ հունարեն «Վարքի» Տրդատ թագավորը սուրբ Գրիգորի հետ թագավորներով և բոլոր մեծամեծներով դնաց Արտաշատ և հրամայեց կործանել Արտեմիսի տաճարն ու Ապոլոնի պատդամատունը և այլն[23]։ Ուրեմն եղել են տարբեր խմբագրություններ և դա չպետք է տվյալ դեպքում հիմք հանդիսանա Ապոլոն-Տիրի տաճարը Վաղարշապատ-Արտաշատ Արաքսի ձախափնյա ճանապարհին փնտրելու համար։ Պետք է նշել նաև, որ Վաղարշապատ-Արտաշատ երկու ճանապարհ է եղել, մեկը Արաքսի ձախ ափով, մյուսը՝ աջ, որն Արաքսն անցնում էր Վարդանակերտի մոտ գտնվող կամրջով և, միանալով արքունական պողոտային, Տափերականով մտնում էր Արտաշատ։ Այս կապակ-

---

21 «Архитектура античного мира», М., 1940, с. 33.

22 Ս. Տ. Երեմյան, Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 47։

23 «Ագաթանգեղոսի պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք)», թարգմ. հունարեն բնագրից Հ. Բարթիկյանի, առաջաբան և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի («Էջմիածին», 1966, № թ-ժ, էջ 80, § 103), Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Երևան, 1977, էջ 175, ծան. 35։

ցությամբ ուշագրավ է Ագաթանգեղոսի վկայությունը Պարթև Անակի կողմից դավադրաբար հայոց Խոսրով Մեծ (Տրդատ II, 216-256) թագավորին սպանելու մասին։ «Իսկ իբրև զայն գիտացին նախարարք հոյակոյտ զօրացն՝ գունդ գունդ հատանէին, զկնի լինէին. ոմանք ընդ ցամաքն անապարեալ, հասանել ի խելս կամրջացն առ դրունս Արտաշատ քաղաքի։ Զի գետն Երասխ յարուցեալ գայր լի դարիւ և դարիւ սառնահալ, ջրակուտակ, ձիւնասոյզ, ձիւնախաղաղ բազմութեամբն յաւուրս իւրոյ պղտորութեանն։ Կէսքն անցեալ ընդ կամուրջն Վաղարշապատ քաղաքի, զոր և կամուրջ Մեծամօրի կոչեն՝ անապարէին հասանել յառաջ մի ի խելս կամրջին Արտաշատու։ Ի կիրեաս հանապարհացն արգելին զնոսա, ի մեջ արարեալ զնոսա՝ ի Տափերական կամրջացն գէտավէժ ստնէին զնոսա»[24]։ Զորքի մեծամեծերը «գունդ գունդ բաժանվելով» երկու ճանապարհով են հետապնդել Անակին և Տափերականի մոտ շրջապատել փախչողներին։ Հնարավոր է, որ Տրդատը և Գրիգորը նույնպես եկել են աջափնյա ճանապարհով և նախ ավերել էն Ապոլոն-Տիրի տաճարը, հետո մտել Արտաշատ։ Սակայն ձախափնյա ճանապարհով գալու դեպքում էլ նրանք մինչև քաղաք մտնելը կարող էին ավերել Ապոլոն-Տիրի տաճարը, հետո Անահիտինը։ Այսպիսով՝ Ապոլոն-Հերմեսը Արտաշատի հիմնադրման ժամանակ կանգնեցվել է Արաքսի աջ ափին, Արտաշատի դիմաց գտնվող բլրի վրա, և Ագաթանգեղոսի նշած «Երազամոյն տեղերը» այստեղ է։

Տրդատ I-ը նույն վայրում Արտաշատը վերականգնելիս, իր թագադրությունը սրբագործելու համար, կառուցել է Ապոլոն-Հերմեսի հետ նույնացված Տիրի տաճարը։

Արտաշատի բլուրը քաղաքի հիմնադրման ժամանակ բնակեցված չի եղել։ Հետագայում, քաղաքի բնակչության աճի հետևանքով, մանավանդ Տիգրան II-ի և Արտավազդ II-ի կողմից հարևան երկրների հելլենիստական քաղաքներից բնակչության գաղթեցման ժամանակ, Արտաշատում հաստատվածների մի մասը, ամենայն հավանականությամբ, բնակեցվել է վերոհիշյալ բլրի վրա, որտեղ կանգնած էր նրանց համար հասկանալի Ապոլոն աստծու բրոնզաձույլ ոսկեզօծ արձանը[25]։ Այս բլուրը, որը բավականին բարձր է և իր մեծությամբ չի զիջում Արտաշատի բլուրներին, ստրատեգիական տեսակետից շատ կարևոր դիրք է զբաղեցնում, ուստի դժվար թե ուշադրությունից վրիպեր։ Ամենայն հավանականությամբ, մ. թ. I դ. նա նաև պարսպապատվել է, այդ դեպքում այն կարող էր մեծ դեր խաղալ Տափերական կամրջի և Արտաշատի պաշտպանության գործում։

Ե՞րբ է հիմնադրվել Դվին քաղաքը[26], այդ մասին պատմագիտական գրականության մեջ որոշակի կարծիք չկա։ Գիտնականների մի մասը գրում է, որ Դվինը քաղաք է դարձել V դարի երկրորդ կեսին[27], իսկ Դվինի պեղումների ղեկավար (մինչև 1976 թ.) Կ. Ղաֆադարյանը կարծում է, որ Դվինը Խոսրով Կոտակի ձեռքով մայրաքաղաք դառնալուց առաջ ունեցել է քաղաքային բնակչություն, որ կենտրոնական թաղամասի հսկայական մեծության եռանավ բազիլիկան հեթանոսական տաճար է և քրիստոնեություն ընդունելու ժամանակ այն վերածվել է եկեղեցու[28]։ Ըստ Դվինի պեղումների (1977 թ.) ղեկավար Ա. Քալանթարյանի, այն հիմնադրվել է IV—V դդ. իսկ Դվինի բլրի վրա աղյուսաշեն մեծ շինության մեջ գտնված կնքադրոշմների կապակցությամբ նա նշում է, որ այդ շենքը թվագրվում է V—VI դդ. և նստած է անմիջապես

---

24 Ագաթանգեղոս, էջ 30, 32։

25 Մովսես Խորենացի, էջ 138։

26 Այդ մասին տե՛ս Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 2, Երևան, 1982, էջ 134—139։

27 Г. Халатянц, Армянские Аршакиды в «Истории Армении» Моисея Хоренского. Опыт критики источников, ч. I. Исследование, М., 1906, с. 201—202: Ас. Шахназарян, Двин, историко-географический очерк, Ереван, 1940, с. 24.

28 Կ. Գ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 137—139։

մ. թ. ա. III— մ. թ. I դդ. շերաի վրա[29]։ Ս. Երեմյանը համարում է, որ Դվինը IV դարի երկրորդ կեսից փաստորեն դառնում է երկրի քաղաքական կենտրոնը[30]։

Իսկ ի՞նչ են ասում գրավոր աղբյուրները և հնագիտական պեղումները։ Մովսես Խորենացին, խոսելով արքունիքը Խոսրով Կոտակի կողմից Արտաշատից Դվին տեղափոխելու մասին, նշում է. «Իսկ սորա զքաջութենէ և զքարի յիշատակած անփոյթ արարեալ՝ զքօսանաց և հաւորութեանց և այլոց որոց պատրաստեալ. նորին աղագաւ և անտառ ստ Ազատ գետովն տնկէ, որ յանուն նորա կոչի մինչև ցայսօր ժամանակի։

Նա և զարքունիսն փոխէ վերոյ անտառին յոստ մի, ապարանս հովանաւորս շինեալ, տր ըստ պարսկական լեզուին Դուին կոչի, որ թարգմանի բլուր։ Քանզի ի ժամանակին յայնմիկ Արէս ուղեկցեալ արեգական, և օդք ջերմայինք պղտորեալք ժանգահոտութեամբ փչէին. յորմէ ոչ կարացեալ ժուժել որք յԱրտաշատն բնակեալ էին կամաւ յանձն առին զփոփոխումն»[31]։

Դվինի մասին մյուս կարևոր վկայությունը Փավստոս Բուզանդինն է. «Եւ ետ հրաման թագաւորն զօրավարին իւրոյ՝ հանել խաշար յաշխարհէն բաղում, և բերել զվայրենի կաղին մայրեաց, և տընկել զայն յԱյրարատեան գաւառին. և առեալ յամուր բերդէն արքունի, որում կոչեն Գառնի, մինչև ի դաշտն Մեծամօրի, ի բլուրն՝ որ անուանեալ կոչի Դուին, որ կայ ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Արտաշատու, զգետն խոնարհ մինչև յապարանսն Տիկնունի՝ տնկեցին զկաղնին։ Եւ կոչեաց զանուն նորա Տաճար մայրի։ Եւ միւս ի մայրեացն յեղեգնաբերանին ի նմանէ ի հարաւակոյս լցին զդաշտն կաղնատուն՝ տնկով. և կոչեցին զանուն նորա Խոսրովակերտ։ Եւ անդ շինեցին զապարանսն արքունականս, և զերկոսեան տեզիսն պարապեալ փակեցին. և ոչ կցեցին ի միմեանս վասն պողոտայի ճանապարհին։ Եւ աճեաց բարձրացաւ և ապա զամենայն էրէս, և զգազանս հրամայեաց ժողովել թագաւորն, և լնուլ գքաղաքն, զի լիցին նոցա տեղիք որոց զքօսանաց ուրախութեան թագաւորութեան նորա»[32]։

Մյուս միջնադարյան պատմիչները՝ Ստեփանոս Տարոնեցին (X—XI դդ.), Կիրակոս Գանձակեցին (XIII դ.), Վարդան Բարձրբերդցին (XIII դ.), Մխիթար Այրիվանեցին (XIII դ.) փաստորեն կրկնում են Մովսես Խորենացուն կամ Փավստոս Բուզանդին։

Քաղաքները հելլենիստական երկրների տնտեսական ու մշակութային կենտրոններ էին և հետագա առաջընթացի նախապայմանը, ուստի նրանք պետության հիմքն ու հենարանն էին։ Խնդիրն այն է, որ հելլենիզմը բարերար ազդեցություն ունեցավ նաև Հայաստանի վրա, որը նույնպես բուռն վերելք ապրեց, հիմնադրվեցին մի շարք նոր քաղաքներ և ծաղկում ապրեցին հները, որոնք դարձան առևտրի, արհեստագործության և մշակութային կենտրոններ։ Հայաստանում ևս, հելլենիստական մյուս երկրների նման, թագավորների հիմնադրած քաղաքները կրում էին դինաստիական անուններ։

Նորաստեղծ քաղաքները բնակեցվում էին այսպես կոչված «սինոյկիսմոսի» (համաբնակեցման) միջոցով, որն ընդունված երևույթ էր հելլենիստական աշխարհում՝ որպես նոր հիմնադրվող քաղաքների շենացման հիմնական եղանակ։ Դա լինում էր հարկադրաբար կամ արտոնություններ տալու ձևով[33]։ Հայաստանում քաղաքային կյանքն ընդհանրապես թույլ էր զարգացած, ուստի քաղաքային բնակչության կարիքը շատ ավելի մեծ էր։ Այդ պատճառով Տիգ-

---

29 А. А. Калантарян, Раннесредневековые буллы Двина («Археологические памятники Армении», № 13, Ереван, 1982. с. 5, 9. ссылка 54).

30 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ֆեոդալական հարաբերությունների ձևավորման ժամանակաշրջանում (III—IV դդ.), («Հայ ժողովրդի պատմություն», հ. 2, էջ 83)։

31 Մովսես Խորենացի, էջ 316։

32 «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց» (այսուհետև՝ Փավստոս Բուզանդ), Թիֆլիս, 1912, էջ 28, 29։

33 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 657—658։ Т. Н. Козина. Некоторые вопросы градостроительства эллинизма («Вопросы всеобщей истории архитектуры», I, М., 1961, с. 14).

րանը և Արտավազդը հարևան հելլենիստական երկրներից քաղաքային բնակչությունը տեղահանեցին և փոխադրեցին Հայաստան։

Հելլենիստական քաղաքաշինությունը շատ բան վերցրեց արևելյանից։ Արևելքում, կլիմայական պայմաններից ելնելով, անհրաժեշտություն է եղել անտառների, այգիների, պարտեզների, լճերի, որսատեղերի և զբաղմունքի վայրերի ստեղծումը։ Այն տարածված է եղել, հատկապես աքեմենյան շրջանում[34], որն ամբողջովին որդեգրվեց հելլենիստական միապետների ու կառավարիչների կողմից։ Երևան եկան այգիներ, մերձքաղաքային դղյակներ, պալատներ, զբաղմունքի վայրեր (канон), շքեղ գիմնազիաներ, խաղահրապարակներ, հսկայական թատրոններ, գազանանոցներ և այլն[35]։ Լավագույն օրինակներից է Սելևկյանների մայրաքաղաք Անտիոքը, որի արվարձաններից մեկում՝ Դաֆնայում, գտնվում էր նրանց մերձքաղաքային նստավայրը, հսկայական այգիներով (մոտ 15 կմ շրջագծով)։ Դաֆնան արքունիքի և նրա հյուրերի համար ժամանցի ու հանգստյան վայր էր[36]։

Հելլենիստական քաղաքաշինության շատ սկզբունքներ կիրառվեցին Հայաստանում։ Երվանդը Երվանդաշատի ու Բագարանի կառուցումից հետո «Տընկէ և մայր մեծի ի հիւսիսոյ կողմանէ դեռոյն, և որմովք ամրացուցանէ, արդելլով ի ներքո այծեմունս, երագունս, և զեղանց և զեղջերուաց ազգ, և ցիռս և վարազս. որք ի բազմութիւն աճեցեալ լցին զանտառն, որովք ուրախանայր Թագաւորն յաւուրս որսոց։ Եւ անուանէ զանտառն՝ Ծննդոց»[37]։

Արտաշատի համար, ըստ երևույթին, սկզբնական շրջանում որսատեղիներ են եղել Մասիսի լանջերը, որի մասին նշում են Մովսես Խորենացին[38] և Ագաթանգեղոսը[39]։

Տիգրան II -ն իր նվաճումներն ավարտելուց հետո մ. թ. ա. 77 թ. ձեռնամուխ եղավ նոր մայրաքաղաքի կառուցմանը։ Ինչպես երևում է գրավոր աղբյուրներից, Տիգրանակերտում իրենց արտահայտությունն են գտել հելլենիստական, առաջին հերթին սիրիական քաղաքաշինության լավագույն տրադիցիաները։ Տիգրանակերտը պետք է լիներ ավելի գեղեցիկ ու շքեղ, քան Անտիոքը, քանի որ ինչպես հելլենիստական քաղաքաշինության գիտակ Վ. Չերիկովերն է ասում, նա միանգամից ուզում էր ունենալ այն ամենը, ինչ մյուս քաղաքներում ստեղծվել էր երկարատև գոյության ընթացքում[40]։ Ապիանոսը վկայում է, որ հայ ավագանին գույքի բռնագրավման սպառնալիքի տակ տեղափոխվել էր Տիգրանակերտ՝, իսկ Պլուտարքոսն ասում է, որ ազնվականությունն ու հասարակ ժողովուրդը, քաղաքն ընդարձակելով ու զարդարելով, աշխատում էին հաճոյանալ Թագավորին[42]։ Տիգրանակերտն, ըստ անտիկ հեղինակների, շքեղորեն կառուցապատված հարուստ քաղաք էր, բարձր պարիսպներով (25մ) անմատչելի միջնաբերդով, պարիսպներից դուրս, քաղաքի արվարձանում գտնվող փառահեղ պալատով, որը շրջապատված էր պարտեզներով, զբոսայգիներով, որսա-

---

34 Г. А. Тирацян, Некоторые аспекты внутренней организации армянской сатрапии (*«Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 2, էջ 100—104*); Г. А. Тирацян, Города Армении эллинистического времени в свете археологических исследований (ВДИ, 1979, № 2, с. 172).

35 Т. Н. Козина, *նշվ. աշխ., էջ 12։*

36 *Նույն տեղում, էջ 47։*

37 *Մովսես Խորենացի, էջ 195։*

38 *Նույն տեղում, էջ 230։*

39 *Ագաթանգեղոս, էջ 120։*

40 V. Tscherikower, Die hellenistischen Stadtegründungen von Alexander dem Grossen bis auf die Romerzeit („Philologus", Suplementband XIX, Heft 1, Leipzig, 1927. S. 199).

41 App., Mithr., 84.

42 Plut., Lucull., XXVI.

տեղերով, ձկնավազաններով ու լճակներով, որոնցից ոչ հեռու կառուցված էր ամրոց[43]։

Մինչև այժմ ենթադրվել է, թե Տիգրանակերտը կազմված է եղել բուն քաղաքից և պարսպից դուրս, մերձակայքում գտնվող միջնաբերդից (իր պալատական կառույցներով), որն անսովոր երևույթ է համարվել Հայաստանի համար[44]։ Քանի որ Հայաստանի բոլոր մայրաքաղաքներում միջնաբերդը եղել է քաղաքի ներսում, ուստի տարբեր բացատրություններ են տրվել, թե այդպես է արվել բնական պայմանների կամ էթնիկական տեսակետից քաղաքը անհուսալի լինելու պատճառով[45], կամ Տիգրանը վերադարձել է արևելյան, ավելի շուտ աքեմենյան հին տրադիցիաներին, և դա համարվել է շեղում հելլենիստական քաղաքաշինության սկզբունքներից[46],

Տիգրանակերտը համեմատվել է Հին ու Նոր Նիսայի հետ, որտեղ բուն քաղաքի կողքին գտնվում էր թագավորական ամրոց Միհրդատակերտը՝ իր պալատներով, այգիներով, ջրավազաններով, սենդամթերքի պահեստներով, թագավորական տնտեսության ղեկավարության շենքով.[47] Արշակունիների ամառային նստավայր էկբատանայի հետ, որից 10 կմ հեռավորության վրա գտնվում էր թագավորական դղյակ՝ Ադրաբանան, որը հրի մատնվեց Տիգրան II-ի կողմից[48], Երվանդաշատի մոտ կառուցված Երվանդակերտի, Ալեքսանդրիայի մոտ կառուցված պալատ-ամրոցի և Անտիոքի ու Դաֆնայի հետ[49]։

Նախ պետք է նշել, որ Տիգրանակերտը Հայաստանի մյուս մայրաքաղաքների նման, քաղաքի ներսում ունեցել է անառիկ ամրոց, որտեղ 69 թ., երբ Լուկուլլոսը պաշարեց Տիգրանակերտը, գտնվում էին Տիգրանի կանանոցն ու գանձերի մի մասը։ Հայտնի է, որ Տիգրանը վեց հազարանոց հայկական հեծելազունդ ուղարկեց, որը ճեղքելով պաշարման օղակը, քաղաքից դուրս բերեց կանանոցն ու գանձերը[50]։ Տիգրանակերտի մերձակայքի պալատն իր պարտեզներով, այգիներով, որսատեղերով, լճերով ժամանցի վայր էր և միայն կարող էր համեմատվել Դաֆնայի հետ։ Պալատից ոչ հեռու կառուցված ամրոցը ոչ մի կապ չուներ նրա հետ, ուստի միջնաբերդ լինել չէր կարող։ Այն չի կարող համեմատվել Հին ու Նոր Նիսայի, էկբատանայի ու Ադրաբանայի և Երվանդաշատի ու Երվանդակերտի հետ (քանի որ դաստակերտ չէ)[51]։

Տիգրանակերտի մերձքաղաքային պալատն, այգիներով ու որսատեղերով, իր նշանակությամբ հիշեցնում է Երվանդի տնկած «Ծննդոց անտառը» և Խոսրով Կոտակի հիմնած անտառն ու պալատը, որ Տիգրանակերտի նման մերձքաղաքային ժամանցի վայր էր՝ զբոսանքի և որսի սիրահար թագավորի համար։ Ինչ վերաբերում է արքունիքը Արտաշատից Դվին տեղափոխելուն, ապա դա, հնարավոր է, եղել է ամառվա ամիսներին ժամանակ անցկացնելու համար, երբ Արտաշատի ճահիճները գարշահոտ էին արձակում, իսկ Դվինում և անտառի տեղանքում կլիման ավելի մեղմ էր։

---

43 App., Mithr., 84, Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, երկեր, հ. 1, Երևան, 1977, էջ 171—172։

44 Г. А. Тирацян, Города Армении эллинистического времени, с. 172.

45 В. М. Арутюнян. К вопросу о градостроительной культуре древней Армении (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 10, с. 77).

46 Г. А. Тирацян, նշվ. աշխ., էջ 172։

47 Г. Кошеленко, А. Акопян, Градостроительство Армении и градостроительство Парфии («Второй международный симпозиум по армянскому искусству», сб. докладов, т. 1, Ереван, 1978, с. 255).

48 Է. Լ. Դանիելյան, Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները», էջ 173, 179, ծան. 48։

49 Г. А. Тирацян, նշվ. աշխ., էջ 172, ծան. 55։

50 App., Mithr., 85։ Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 197։

51 Երվանդակերտը դաստակերտ էր, այսինքն թագավորական տնտեսություն էր՝ հիմնված ստրկական աշխատանքի վրա։

Դվինը, եթե հիմնադրվեր որպես քաղաք, ապա շատ արագ պիտի կառուցվեր, ինչպես նման դեպքերում տրվում էր։ Այնուհետև պատմիչներն իրենք կնշեին քաղաք կառուցելու փաստը։ Մայրաքաղաքի գլխավոր հատվածներից մեկը միջնաբերդն է, որը առաջին հերթին է կառուցվում ու պարսպապատվում, մինչդեռ պատմիչները խոսում են միայն անտառը պարիսպներով փակելու մասին։ Թագավորի կողմից հիմնադրվող քաղաքը, այն էլ մայրաքաղաքը, ստանալու էր դինաստիական անուն, սակայն, խորենավակերտ կոչվեց անտառը և ոչ՝ պալատի տեղը։ Նույնիսկ Դվինի «հիմնադրումից» մոտ 20 տարի հետո, Արշակ II-ի (345—368) հիմնած նոր քաղաքը կոչվեց նրա անունով՝ Արշակավան[52]։

Նորաստեղծ քաղաքները, ինչպես նշեցինք, բնակեցվում էին «սինոյկիսմոսի» միջոցով, ինչպես օրինակ, Երվանդաշատը, Արտաշատը, Տիգրանակերտը, որտեղ թագավորները հարկադրաբար տեղափոխեցին մարդկանց, իսկ Արշակավանը բնակեցվեց արտոնություններ շնորհելու՝ պարտքերից ազատելու, հանցանքները ներելու, տուժողներից չհետապնդվելու եղանակով[53]։ Իրանում նույնպես, դեռևս III—IV դդ., «սինոյկիսմոսը» մնում էր նորաստեղծ քաղաքների բնակեցման հիմնական ձևը[54]։

Արտաշատից Դվին, ըստ Մովսես Խորենացու, տեղափոխվել են կամավոր, այն էլ փոքրաթիվ քանակությամբ մարդիկ։ Խոսրով Կոտակից հետո ոչ մի վկայություն չկա արքունիքը Դվինում գտնվելու կամ մայրաքաղաքը՝ Դվինը լինելու մասին։ Երբ 163 թ. Արտաշատը Ստատիոս Պրիսկոսի կողմից ավերվեց, և Վաղարշապատը (Կայնեպոլիս անունով) Մեծ Հայքի «գլխավոր քաղաք» հռչակվեց[55], Արտաշատը չկորցրեց մայրաքաղաքի իր ստատուսը, որովհետև հայ թագավորներին հանդիպում ենք և՛ Արտաշատում, և՛ Վաղարշապատում։ Վաղարշապատի դերը բարձրանում է, հատկապես՝ Տրդատ III-ի օրոք, երբ այն դառնում է հայ եկեղեցու պաշտոնական կրոնական կենտրոնը, սակայն, Արտաշատը շարունակում էր մնալ մեծ քաղաք և միջազգային առևտրի ու արհեստագործության կենտրոն։ Այդ է վկայում Հուստինիանոս I-ի (527-565) կոդեքսում արտացոլված 408/9 թվականի կայսերական էդիկտը[56]։

Փավստոս Բուզանդը Դվինի բլրի տեղը «Արտաշատ մեծ քաղաքի» դիրքից է որոշում։ Խոսրով Կոտակի հաջորդ՝ Տիրան թագավորի (338-344) կողմից Կեսարիայից վերադարձող Հուսիկ կաթողիկոսին դիմավորելու մասին խոսելիս, Փավստոս Բուզանդը նորից է նշում Արտաշատի՝ մեծ քաղաք լինելու, Հուսիկին Վաղարշապատ տանելու մասին։ Շապուհ II-ը 369 թ. ավերածության է ենթարկում Հայաստանի քաղաքներն ու ամրոցները, գերեվարում բնակչությանը։ Այդ մասին Բուզանդը հիշատակում է Վաղարշապատը, Երվանդաշատը, Ջաբեհավանը, Զարիշատը, Վանը, Նախճավանը, բայց մանրամասնորեն կանգ է առնում «Մեծն Արտաշատի» վրա, որտեղից ամենաշատ գերիներն են տարվում[57], իսկ նրա արվարձանում գտնվող Դվինի մասին չի խոսում։ Պետք է ենթադրել, որ դեռևս այդ ժամանակ Դվինն աննշան բնակավայր էր, ուստի ավերածության չի ենթարկվել։

Ֆեոդալական կարգերի զարգացման հետ միասին սկսվեց կենտրոնական իշխանության հենարան քաղաքների անկման պրոցեսը, բացի այդ, III դ. և IV դ. սկզբին, Հռոմի տնտեսական սուր ճգնաժամի պատճառով, նրա առևտուրն արևելքում խիստ ընկավ, ուստի թուլացավ նաև Հայաստանի հետ կատարվող առևտուրը[58]։ Այդ պայմաններում նոր քաղաքներ հիմնադրելու ամեն մի փորձ

---

52 Փավստոս Բուզանդ, էջ 167։

53 Մովսես Խորենացի, էջ 348։

54 Н. В. Пигулевская, Города Ирана в раннем средневековье, М.—Л., 1956, с. 157—158, 165—168.

55 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 785։

56 Նույն տեղում, էջ 809—810, հ. 2, էջ 147—148։

57 Փավստոս Բուզանդ, էջ 47, 260—263։

58 Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э.—XV в. н .э.), Ереван, 1954, с. 118.

դատապարտված էր ձախողման, որի վառ ապացույցն էր Արշակավանը։ Քաղաքների անկմանը նպաստեց նաև սասանյան Պարսկաստանի վարած քաղաքականությունը, որն ամեն կերպ ձգտում էր թուլացնել ու վերացնել Արշակունիների թագավորությունը։ Այս պրոցեսն արագացրին և իր ավարտին հասցրին Շապուհ II -ի կողմից Հայաստանի խոշոր քաղաքների ավերումն ու բնակչության գերեվարումը։ Միայն Վաղարշապատն է, որ (լինելով երկրի աթոռանիստ քաղաք ու կրոնական կենտրոն) «ուշքի է գալիս» և մնում այդպիսին մինչև V դարի երկրորդ կեսը։

Կորյունի և Ղազար Փարպեցու վկայության համաձայն Մեսրոպ Մաշտոցը Խոսրով IV -ի ժամանակ եկավ Արշակունիների մայրաքաղաք Վաղարշապատ և ծառայության անցավ արքունի դիվանում։ Հետագայում նա դարձյալ դալիս է Վաղարշապատ (Գողթն գավառից) Սահակ Պարթևի մոտ, այնտեղ նրանք հանդիպում են Վռամշապուհ թագավորին (388—414)։ Վերջապես Մաշտոցն իր աշակերտների հետ Ասորիքից վերադառնում է Վաղարշապատ և այնտեղ հիմնում առաջին հայկական դպրոցը[59]։

Արտաշատը դրանից հետո նորից հիշատակվում է. 450-451 թթ. ապստամբության ժամանակ նշվում է որպես թագավորանիստ վայր, որպես ամրոց[60], իսկ 480-ական թվականներին՝ միայն բերդ և գյուղաքաղաք[61]։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Դվինը Խոսրով Կոտակի կողմից չհիմնադրվեց որպես մայրաքաղաք, ուստի չստացավ դինաստիական անուն։ Դրանից հետո մայրաքաղաքները դեռևս Արտաշատն ու Վաղարշապատն էին։ 369 թ. Հայաստանի մայրաքաղաքների ավերածությունից հետո, մայրաքաղաքը կամ արքունիքը չտեղափոխվեց Դվին, որովհետև այն դեռ մի աննշան բնակավայր էր, այլ վերականգնվեցին Վաղարշապատը, որը շարունակեց մնալ իբրև քաղաքական և կրոնական կենտրոն, և Արտաշատը, որը ավանդական կարգով կատարում էր առևտրական կենտրոնի դեր։

369 թ. հետո գերեվարությունից խույս տված Արտաշատի բնակիչների մի մասը աստիճանաբար տեղափոխվեց Դվին։ Վերջինս մեծացավ և V դ. կեսերին արդեն քաղաքատիպ ավան էր՝ նման Արտաշատ գյուղաքաղաքին և Վաղարշապատին։ 450 թ. ապստամբության ժամանակ, Արտաշատը նորից է ավերածություններին ենթարկվում[62]։ 480-ական թվականներին Վաղարշապատի վիճակը նույնպես բարվոք չէր, ուստի, մարզպանական Հայաստանի քաղաքական-վարչական ու կրոնական կենտրոնը նպատակահարմար է դառնում տեղափոխել Դվին։ Դրանից հետո վերջինս ստանձնում է նաև առևտրական կենտրոնի դերը, որը նպաստում է նրա արագ վերելքին։

Այսպիսով՝ Դվինը պետք է համարել տարբերյնորեն առաջացած քաղաք, որը V դ. 70-80-ական թվականներին դարձավ մարզպանական Հայաստանի մայրաքաղաքը։ Այրարատը նորից մնաց իբրև Հայաստանի կենտրոն, որը կոչվում էր «Արքունի տուն» կամ «Ոստանն Հայոց»։ Այդպես էր անվանվում մայրաքաղաք Արտաշատն իր գավառով, որն այժմ ժառանգեց Դվինը։ Վերջինիս անունով «Ոստան Հայոց» գավառը կոչվում է նաև «Ոստանն Դվնոյ»[63]։

---

59 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Ա մաս, նույնի՝ Երկեր, հ. 2, Երևան, 1978, էջ 255—261։

60 «Եղիշեի Վարդանանց պատմությունը» (այսուհետև՝ Եղիշե), թարգմ. և ծան. Ե. Տեր-Մինասյան, Երևան, 1958, էջ 31, 64, 73, 117։

61 «Ղազարայ Փարպեցւոյ, Պատմութիւն Հայոց թուղթ առ Վահան Մամիկոնեանն», Երևան, 1982, էջ 292, 348։

62 Եղիշե, էջ 68, 73։

63 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 2, էջ 166։

О НЕКОТОРЫХ ТРАДИЦИЯХ ЭЛЛИНИСТИЧЕСКОГО ГРАДОСТРОИТЕЛЬСТВА, О МЕСТНОСТИ ЕРАЗАМУЙН И ОСНОВАНИИ ГОРОДА ДВИН

ЖОРЕС ХАЧАТРЯН

Резюме

В истории Армении эллинистического периода и первых веков нашей эры значительный интерес представляют вопросы, связанные с местом установления статуй Артемиды (Анаит) и Аполлона (Гелиос-Митра), перевезенных из Багарана при основании столицы страны—Арташата, а также с перенесением в дальнейшем столицы в город Двин и с основанием последнего, о чем в историографической литературе существуют различные точки зрения.

Изучение источников и результатов археологических раскопок показывает, что статуя Аполлона и храм синкретизированного с этим божеством Тира находились не в Двине. Статуя Аполлона была установлена на холме напротив Арташата, на правом берегу р. Аракс, близ дороги, ведущей из Арташата в Тигранакерт, где и в I в. н. э. Тиридатом I был воздвигнут храм Тира.

Двин, разросшийся за счет населения городов Армении, разоренных Шапуром II в 369 г., стихийно перерос в поселение городского типа лишь со II четверти V в. н. э. Окончательное же формирование Двина в качестве экономического, политического и религиозного центра Армении произошло уже в конце V в., после переноса сюда католикосата из Вагаршапата. Эти трансформации способствовали тому, что впоследствии Двин стал ведущим торговым центром Армении.